

ՇԻՐԱԿԻ ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ<sup>1</sup>

*Մարինե Հ. Խեմյան*

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ

**Անփոփում**

*Նախաբան.* Շիրակի հայոց բանահյուսական ժառանգության մեջ ուրույն տեղ է զբաղեցնում վիպական բանահյուսությունը: Շիրակի վիպական բանահյուսության ժանրերը (հեքիաթներ՝ հրաշապատում, իրապատում, կենդանական, էպոս, սիրավեպ, իրապատում զրույցներ, ավանդություններ և ավանդազրույցներ, առակներ, զվարճախոսություններ, ստապատումներ, հուշապատումներ և այլն) ներկայացնում են համահայկական պոեմների ու մոտիվների տեղական տարբերակները՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով: *Մեթոդներ և նյութեր.* Սույն ուսումնասիրության համար հիմք է դարձել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում պահվող Շիրակի բանահյուսության դեռևս անտիպ նյութը: Հետազոտության ժամանակ օգտագործվել է բանագիտության մեջ կիրառվող պատմահամեմատական մեթոդը: *Վերլուծություն.* Ընտրված նյութերը ենթարկվել են մանրակրկիտ ուսումնասիրության՝ ըստ վիպական ժանրերի՝ համեմատելով Հայաստանի այլ տարածաշրջանների, ինչպես նաև միջազգային նույնատիպ պոեմների հետ: Վեր են հանվել դրանց տիպաբանական, կառուցվածքային, պոեմատային, մոտիվային, գործառութային առանձնահատկությունները: *Արդյունքներ.* Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Շիրակի վիպական բանահյուսությունը Հայաստանի մյուս տարածաշրջանների բանահյուսական ժառանգության համատեքստում, փոխներգործությունների և փոխառնությունների արդյունքում ունենալով որոշ ընդհանրություններ, այն է ընկնում տարածաշրջանին հատուկ կոլորիտով ու բարբառով: Արդյունքում՝ ընտրված պոեմները կընդգրկվեն

<sup>1</sup> Հետազոտությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6B027 ծածկագրով «Շիրակի հայոց բանահյուսական մշակույթը» գիտական թեմայի շրջանակներում:

2024 թվականին հրատարակվելիք «Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը» բանահյուսական նյութերի ժողովածուի «Վիպական բանահյուսություն» բաժնում:

**Բանալի բառեր՝** *վիպական բանահյուսություն, հեքիաթ, զրույց, ավանդություն, զվարճախոսություն, հերոս, սյուժե, մոտիվ, գործառույթ, բարբառ:*

**Ինչպես հղել՝** Խենյան Մ., *Շիրակի վիպական բանահյուսությունը*, // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: 2023: Հ. 2(26): 142-155 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.2-142

## EPIC FOLKLORE OF SHIRAK

*Marine H. Khemchyan*

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

### Abstract

**Introduction:** Epic folklore occupies a special place in the folklore heritage of the Armenians of Shirak. The genres of Shirak's epic folklore (fairy tales, common tales, animals, epic tales, epic love stories, realistic tales, stories, traditions, legends, fables, jokes, unrealistic fables, memorials, etc.) represent local variants of pan-Armenian plots and motifs, with their own characteristic features. **Methods and materials:** The basis for this study was the still unpublished material of Shirak's folklore, kept in the folklore archive of the Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia. The study used the historical-comparative method used in folkloristics. **Analysis:** The selected materials were studied rigorously by epic genres, compared with the same type of plots from other regions of Armenia, as well as international ones. Their typological, structural, plot, motive features were revealed. **Results:** The study shows that the Shirak epic folklore in the context of the folklore heritage of other regions of Armenia, as a result of interactions and relationships having certain common features, is distinguished by the flavour and dialect characteristics of the region. As a result, the selected plots will be included in the "Epic Folklore" section of the collection of folklore materials "Shirak: the Folklore Culture of Armenians" to be published in 2024.

**Key words:** *epic folklore, fairy tale, legend, tradition, joke, character, plot, motif, function, dialect.*

**Citation:** Khemchyan M., *Epic Folklore of Shirak*. // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. V. 2(26), pp. 142-155. DOI: 10.52971/18294316-2023.26.2-142

## ЭПИЧЕСКИЙ ФОЛЬКЛОР ШИРАКА

*Марине Г. Хемчян*

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА

### Аннотация

**Введение:** В фольклорном наследии ширакских армян особое место занимает эпический фольклор. Жанры эпического фольклора Ширака (сказки - волшебные, бытовые, животные, эпос, эпическое сказание о любви, реалистические сказания, сказы, предания, легенды, басни, анекдоты, небылицы, мемораты и т.д.) представляют местные варианты всеармянских

сюжетов и мотивов, со своими характерными особенностями. *Методы и материалы:* Основой для настоящего исследования стал пока еще непечатанный материал фольклора Ширака, хранившийся в фольклорном архиве Института археологии и этнографии НАН РА. При исследовании использовался историко-сравнительный метод, применяемый в фольклористике. *Анализ:* Выбранные материалы подвергались скрупулезному исследованию по эпическим жанрам, сравнивая с однотипными сюжетами как других регионов Армении, так и международными. Выявлялись их типологические, структурные, сюжетные, мотивные особенности. *Результаты:* Исследование показывает, что ширакский эпический фольклор в контексте фольклорного наследия других регионов Армении, в результате взаимодействий и взаимоотношений имеющий определенные общности, выделяется колоритом и диалектом, свойственным региону. В результате, выбранные сюжеты будут включены в раздел «Эпический фольклор» сборника фольклорных материалов «Ширак: фольклорная культура армян», планируемый издаваться в 2024 году.

**Ключевые слова:** *эпический фольклор, сказка, сказание, предание, анекдот, герой, сюжет, мотив, функция, диалект.*

**Как цитировать:** Хемчян М., *Эпический фольклор Ширака*, // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри, 2023. Т. 2(26). сс. 142-155. DOI: 10.52971/18294316-2023.26.2-142

**ՆԱԽԱԲԱՆ.** Ժողովրդական բանահյուսության երեք սեռերին<sup>2</sup> պատկանող ստեղծագործությունները սեռային տարբերակումներից բացի (վիպական, քնարական, դրամատիկական) ունեն նաև ձևային տարբերություն: Ըստ ձևի կամ կատարման եղանակի դրանք բաժանվում են երեք խմբի՝ բանավոր պատումային արձակ, չափածո երգային և ասույթաբանական ստեղծագործությունների: Սույն ուսումնասիրության մեջ մենք առաջնորդվում ենք ձևային տարբերակմամբ, այսինքն՝ Շիրակի վիպական բանահյուսության մեջ ներառվելու են պատմողական ստեղծագործությունները՝ հեքիաթները, գրույցները, ավանդությունները, զվարճախոսությունները, ստապատումները և այլն:

Շիրակի մարզը Հայաստանի ինքնատիպ տարածաշրջաններից մեկն է, որն առանձնանում է իր հյութեղ բառաբանով, ավանդական բանահյուսական արժեքների պահպանմամբ ու այն բանավոր խոսքում կիրառելու առանձնահատկությամբ: Բանահյուսական բանավոր ավանդույթը ներկայացնում է մարզի ազգաբնակչության դեմքը և ենթակա է ուսումնասիրության:

Շիրակում բազմաժանր բանահյուսական նյութեր են գրառել և հանձնել բանահյուսական արխիվ բանահավաքներ Գեղամ Թարվերդյանը, Խաչիկ Դաբադյանը, Վարդ Բդոյանը, Պարույր Բարսեղյանը, Հրաչ Մկրտչյանը, Ստեփան Խաչատրյանը, Բարխուդար Ղազիյանը, Համլետ Մովսիսյանը, Եղիշե Խաչատրյանը, Անուշավան Գևորգյանը, Սարգիս Հարությունյանը, Արտաշես Նազինյանը, Արագ Կարապետյանը, Արուսյակ Սահակյանը և ուրիշներ, որոնց գրառումները մինչ օրս չեն հրատարակվել:

Սույն ուսումնասիրության մեջ մեր նպատակն է ներկայացնել Շիրակի անտիպ վիպական բանահյուսությունը՝ ժանրային բոլոր դրսևորումներով, այսինքն, ինչպես նշեցինք վերևում, հեքիաթներն իրենց տարատեսակներով (կենդանական, հրաշապա-

<sup>2</sup> Բանահյուսության սեռերի և տեսակների փոխառնչությունների մասին տե՛ս [12, էջեր 102-109]:

տում, իրապատում), զրույցները, ավանդությունները, զվարճախոսությունները, ստապատումները, հուշապատումները և այլն:

Շիրակի վիպական բանահյուսության որոշ պոեմներ ունեն վաղնջական արմատներ, աղերսներ ունեն ինչպես հնագույն առասպելների, այնպես էլ հնդիրանական ժողովուրդների մեջ հնում ստեղծված պոեմների հետ, որոնք մարգ են ներթափանցել տարբեր եղանակներով (առևտուր, տեղահանություն, միգրացիա, պանդիստություն): Այդ ներթափանցված պոեմները, պայմանավորված մի շարք գործոններով (հոգեբանական, տարածական, սոցիալական, պատմական) և ընդհանրություններով, միահյուսվել են տեղական բանավոր ավանդության հետ, ձեռք են բերել նոր դիմագիծ և դարձել տարածաշրջանի բանահյուսական ժառանգության մաս:

Ուսումնասիրության համար Շիրակի վիպական բանահյուսության բազմազան ժանրերից ընտրում ենք արձակ՝ պատմողական տեսակը ներկայացնող հրաշապատում, կենդանական, իրապատում հեքիաթների և զվարճախոսությունների մի փոքր, ինքնատիպությամբ առանձնացող մասը:

**Հրաշապատում հեքիաթներ**

Հեքիաթը բազմաբնույթ ու բազմաշերտ ստեղծագործություն է, որի մեջ ընդգրկված են մարդկային իմացությունների, բնաճանաչողական կարողությունների, հարաբերությունների, սովորույթների ու հավատալիքների մասին դարերով ամբարված գիտելիքները: Շոտլանդացի մարդաբան Ջեյմս Ջոյս Ֆրեզերի վկայմամբ՝ «...ժողովրդական հեքիաթներն աշխարհի պատճենն են այն տեսքով, ինչպես որ պատկերվում էին նախնադարյան մարդկանց գիտակցության մեջ, և կասկած չկա, որ բոլոր պատկերացումները, որքան էլ դրանք անհեթեթ թվան, ժամանակին եղել են ամենաստվորական համոզմունքներ» [23, էջ 624]:

Ուստի հեքիաթի հերոսի գործողությունները խարսխվել են մարդու բազմադարյան գիտելիքների վրա և ուղեկցվել են հարակից կերպարների շարքով, որոնք նպաստել են հեքիաթի գլխավոր խնդրի լուծմանը:

Հեքիաթի կառուցվածքը որոշակի սխեմա է՝ սկզբնամասով, միջնամասով և ավարտով, որը տարածվում է հեքիաթների բոլոր տեսակների վրա: Թեև հեքիաթները ստորաբաժանվում են հրաշապատում, իրապատում և կենդանական տեսակների, սակայն դրանց սահմանները հստակ չեն, և դրանք կարող են հանդես գալ փոխներթափանցումներով: Հետևաբար հրաշապատում հեքիաթի տարրեր կարող են հանդիպել թե՛ իրապատում և թե՛ կենդանական հեքիաթներում և հակառակը՝ կենդանական և իրապատում հեքիաթների տարրեր կարող են հանդիպել հրաշապատում հեքիաթներում: Հեքիաթի հերոսն ունի գործողությունների որոշակի հաջորդականություն՝ կախված նրա առջև դրված խնդրի իրագործման բարդությունից: Հայ ժողովրդական հեքիաթը սովորաբար սկսվում է գործող անձանց թվարկումով, այնուհետև գլխավոր հերոսը տարբեր պատճառներով (հրաշագործ առարկա ձեռք բերելու նպատակով, հմայական արգելքը խախտելու պատճառով, անեծքի հետևանքով և այլն) հեռանում է տնից, տարբեր փորձություններ հաղթահարելով՝ հասնում իր նպատակին և վերադառնում էլման կետ: Հրաշապատում հեքիաթները, ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդների պարագա-

յում, սխեմատիկորեն ունեն միանման կառուցվածք և գործող անձինք՝ իրենց համապատասխան գործառույթներով [20, էջեր 29-60]:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում (ՀՀ ԳԱԱ ՀԱԻԲԱ) պահվող Շիրակի տարածաշրջանի «Փետե ձին» հեքիաթը [1, էջ FFIV: 2291,01-2309,00] պատկանում է այն հեքիաթների թվին, որոնց արմատները գնում են վաղնջական ժամանակներ: Ըստ Հանս-Յորգ Ութերի միջազգային դասակարգման՝ այդ հեքիաթը դասվում է ATU 575 «Արքայազնի թևերը» տիպի հեքիաթախմբին, ըստ որի՝ «մրցակից աշխատողները մրցույթ են ունենում՝ կառուցելու ամենաիրաշալի օբյեկտը: Ոսկերիչը արհեստական ձուկ է կառուցում (կամ ուրիշ բան), հյուսնը՝ արհեստական թռչող առարկա (ծալովի թևեր, թռչուն, թևերով մեխանիկական ձի): Արքայազնը գնում է թռչող առարկան և դրա հետ թռչում օտար երկիր, որպեսզի տեսնի արքայադստերը (որին թագավորը փակել է աշտարակում) [մոտիվներ՝ K1346, F1021.1]: Արքայազնը դառնում է արքայադստեր սիրեկանը և հղիացնում նրան: Երբ թագավորն իմանում է, թե ինչ է պատահել, հրամայում է մահապատժի ենթարկել արքայազնին և արքայադստերը: Սիրահարները, նստելով թռչող առարկայի վրա, փախչում են դեպի արքայազնի հայրենիքը [մոտիվներ՝ RIII.3.1, R215.1], որտեղ նրանք ամուսնանում են: Որոշ տարբերակներում նրանք վայրէջք են կատարում իրենց ճանապարհին, որպեսզի արքայադուստրը կարողանա ծննդաբերել: Կրակ վերցնելիս թռչող առարկան այրվում է: Սիրահարները բաժանվում են (և ավելի ուշ վերամիավորվում են) [25, էջ 344]:

Այս տիպի հեքիաթների սկզբնական գրական աղբյուրը բանահյուսական հիմք ունեցող հնդկական «Պանչատանտրան» («Հնգամատյան») է: Փոխառությունների տեսության հիմնադիր Թեոդոր Բենֆեյը, ուսումնասիրելով «Պանչատանտրայի» տարբեր խմբագրությունները, եկել է այն համոզման, որ եվրոպական ժողովուրդները Հնդկաստանից եկող պյուժեներն ու մոտիվները ենթարկել են վերամշակման և ստեղծել նոր ստեղծագործություններ:

«Պանչատանտրայի» Առաջին տրակտատի տասնմեկերորդ հեքիաթում («Արքայադստերը սիրահարված ջուլիակը») [24, էջեր 89-112] հյուսնը իր ջուլիակ ընկերոջ համար առասպելական Գարուդա փայտե թռչուն է պատրաստում, որպեսզի նա կարողանա տիրանալ արքայադստերը՝ ներկայանալով Վիշնուի կերպարանքով: «Պանչատանտրայի» այս պատումի պյուժեն փոխակերպումներով հասել է մեր օրերը և Հանս-Յորգ Ութերի դասակարգմամբ՝ վերոնշյալ տիպի մեկ մոտիվին է համապատասխանում: Տարբերությունը փայտե օբյեկտի պատրաստման եղանակի մեջ է. «Պանչատանտրայում» այն պատրաստվում է հերոսի ընկերոջ կողմից և ոչ թե մրցույթի արդյունքում: Ընդ որում, հեքիաթի պյուժեի հանգուցալուծումը կատարվում է առասպելաբանական Վիշնուի միջամտությամբ. «...Այնուհետև երանելի Վիշնուն, սպառիչ խորհրդածությունից հետո, խոսեց Գարուդայի հետ. «Ո՛վ թևավոր արքա, քո դատողությունը արդար է: Այս ջուլիակն իր մեջ աստվածության կայծ ունի: Հետևաբար, նա պետք է լինի այնտեղի թագավորի սպանողը: Եվ դա իրականացնելու համար. ես և դու պետք է ընկերանանք նրա հետ: Իմ հոգին կմտնի նրա մարմինը, դու պիտի ներշնչես նրա թռչունին, և իմ սկավառակը՝ նրա սկավառակը»: Այդպես լինի, -ասաց Գարուդան՝ համաձայնելով» [24, էջ 102]:

Հինհնդկական առասպելաբանության մեջ Գարունդան թռչունների արքան է՝ հինդուիզմի գլխավոր աստվածներից մեկի՝ Վիշնուի լծկան թռչունը [17, էջ 266]: «Պանչատանտրայում», ի տարբերություն միջազգային նմանատիպ այլ պոեմների, թռչող օբյեկտը չի կործանվում, այն մինչև վերջ ծառայում է հերոսին: «Արքայադստերը սիրահարված ջուլիակը» հեքիաթի պոեմն, Պարսկաստանի միջոցով Հնդկաստանից փոխանցվելով մինչև արաբական երկրներ, իր արտահայտությունն է գտնում «Հազար ու մեկ գիշերի» «Սևափայտե ձին» հեքիաթում [8, էջեր 327-352], որը Շահրազադեն Շահրիարին է պատմում 19 գիշերների ընթացքում: Այս հեքիաթում մրցույթը տարբեր երկրներից եկած երեք իմաստունների միջև է. «Եվ հետո առաջ եկավ երրորդ իմաստունը՝ ձիու տերը, ու համբուրեց գետինը թագավորի առջև ձևական հաճոյախոսություններից ու բարենաղթանքներից հետո և նրան առաջարկեց մի ձի՝ պատրաստված շատ հազվագյուտ էբենու սև փայտից, ոսկով ու աղամանդներով զարդարված թամբով ու սանձով, ինչպիսիք չկան նույնիսկ թագավորական ձիերի վրա: Սաբուր թագավորը, զարմացած ու անհանգստացած ձիու գեղեցկությունից և կատարելությունից, հարցրեց, թե որո՞նք կարող են լինել ձիու արժանիքները: Պարսիկը պատասխանեց. «Տե՛ր իմ, ձիու արժանիքը կայանում է նրանում, երբ որ նրան նստում են, նա հեծյալին օդով տանում է լույսի արագությամբ: Թագավորը աղաղակեց. «Եթե քո ասածները ճիշտ են, ապա ես կբավարարեմ քո բոլոր ցանկությունները» [8, էջ 330]:

Ձիու օգտակարությունը փորձելու համար այն հեծնում է արքայազնը: Արքայազնը փայտե մեխանիկական ձիու միջոցով տիրում է մեկ այլ թագավորության արքայադստերը և նրա հետ ձիով ճանապարհվում դեպի իր երկիրը: Ի տարբերություն «Պանչատանտրայի» պատումի՝ այս հեքիաթում արքայազնի և արքայադստեր վերամիավորումից հետո թագավորը ջարդում է Սևափայտե ձին: Տարբեր ժողովուրդների նմանատիպ հեքիաթներում մեխանիկական հրաշագործ օբյեկտը ոչնչանում է (այրվելով, ջարդվելով, մեխանիզմի փչանալով):

Հանս-Յորգ Ութերը, համադրելով շուրջ 60 ազգերի մեջ հանդիպող այս տիպի հեքիաթները, ներկայացրել է վերոնշյալ կադապարը [25, էջեր 344, 345]: Արիեստական թռչող օբյեկտը տարբեր ժողովուրդների հեքիաթներում տարբեր ձևով է դրսևորվում: Ինչպես տեսանք, հնդիկների մոտ այն փայտե արծիվ էր, իսկ արաբների մոտ՝ փայտե ձի: Մեխանիկական առարկան փայտե ձի է նաև Շիրակի տարածաշրջանի քննության առնվող [1, էջ FFIV: 2291,01-2309,00], ինչպես նաև Հայաստանի մեկ այլ տարածաշրջանի՝ Այրարատի համանուն «Փայտե ձին» [9, էջեր 98-105] հեքիաթներում: Մեխանիկական օբյեկտը փայտե ձի է նաև Հայաստանին հարևան Վրաստանի «Արքայազնը և փայտե ձին» [18, էջեր 102-107] հեքիաթում: Տարբերությունը թռչող օբյեկտի ձևաբանական, գործողության մեջ դնելու և դրա հետագա ճակատագրի մեջ է: Շիրակի տարածաշրջանի հեքիաթում թագավորն իր մինուճար երեխայի համար երեք, տարբեր արիեստավորների (քարտաշ, երկաթագործ, հյուսն) պատվիրում է խաղալիք պատրաստել: Մրցույթում հաղթում է հյուսնը [1, էջ FFIV: 2291,01-2309,00]: Հայկական մյուս հեքիաթում արքայադուստրն իր երկու փեսացուներին հանձնարարում է այնպիսի մասնագիտություն ձեռք բերել, որ ում պատրաստած իրը հավանի, նրա հետ ամուսնանա: Արքայա-

դուստրն ընտրում է հյուսնի պատրաստածը և ամուսնանում նրա հետ, իսկ փայտե ձին բաժին է հասնում արքայազնին [9, էջ 99]: Վրացական հեքիաթում Աստված անժառանգ թագավորին որդի է պարգևում: Թագավորի բոլոր հպատակները շնորհավորում են թագավորին: Թագավորն ուներ երկու հմուտ վարպետ՝ ոսկերիչ և հյուսն: Հյուսնը արքայազնի համար փայտե ձի է պատրաստում [18, էջ 103]: Շիրակի հեքիաթում փայտե ձին ամբողջական է, և հերոսն ինքն է հասկանում, թե ինչպես գործի դնի այն, Հայաստանի մյուս տարածաշրջանի՝ Այրարատի հեքիաթում հերոսը անհրաժեշտության դեպքում քանդում է ձին, լցնում տոպրակի մեջ, այնուհետև հավաքում է այն և գործի դնում: Վրացական հեքիաթում հյուսնն է սովորեցնում արքայազնին, թե ինչպես գործարկի այն: Շիրակի հեքիաթում ձիու շարժիչն ուժեղ քամուց փչանում է, հայկական մյուս հեքիաթում և վրացականում փայտե ձին այրվում է: Եվ հեքիաթի հետագա գործողությունները ծավալվում են առանց փայտե ձիու:

Մի շարք հեքիաթներում մեխանիկական թռչող առարկան արծիվ է [19, էջեր 1-12], ծալովի թևեր [21, էջեր 2-26] կամ պարզապես սարք, որ թևեր ունի [10, էջեր 414-423]:

Ինչպես Շիրակի քննության առնվող հեքիաթում, այնպես էլ մյուս գուգահեռներում հեքիաթի հերոսը (արքայազնը), թռչող մեխանիկական առարկան օգտագործելով, բազմաթիվ փորձությունների ենթարկվելով, ի վերջո հասնում է իր նպատակին՝ ամուսնանում է այլ թագավորության անհասանելի արքայադստեր հետ:

Համեմատաբար խոր ակունքներ ունի նաև Շիրակի տարածաշրջանի «Ջամփուլադի հեքիաթը» [13, էջ FFX: 6649,01-6681,00], որը դասվում է Հանս-Յորգ Ութերի՝ հեքիաթների տիպերի միջազգային դասակարգմամբ «Կախարդական առարկաներ» հեքիաթախմբի «Կախարդական մատանի»՝ ATU 560 տիպին: Շիրակի տարածաշրջանի հիշյալ հեքիաթի գուգահեռների մասին ճապոնական, ռուսական, բուլղարական, կիրգիզական, վրացական և այլ ժողովուրդների հեքիաթների հետ հանգամանորեն ներկայացված են Մարինե Խեմչյանի հոդվածներից մեկում [7, էջեր 40-50]:

Շիրակի տարածաշրջանում պատմվող միևնույն հեքիաթի տարբերակները վերնագրի փոփոխությամբ և հերոսների գործողությունների ու գործառույթների որոշակի տարբերություններով հանդիպում են տարբեր շրջաններում և պատմվում տարբեր բանասացների կողմից՝ տվյալ շրջանին բնորոշ խոսվածքով: Այդպիսիք են «Աղբալասի և Ղուշբալասի» [5, էջ FFX: 2997,01-3083,00] և «Աղ-Բալասի, Ղուշ-Բալասի» [16, էջ FFX: 1117,01-1147,00] հեքիաթները: Նշված հեքիաթները սկսվում են հայ ավանդական առասպելաբանությանը բնորոշ երկվորյակների առասպելի՝ ոչ հակադիր երկվորյակների հրաշագործ բնույթի ծագման մոտիվով [11, էջեր 344-345]: Հակադիր և ոչ հակադիր երկվորյակների ծագման մոտիվը հանդիպում է նաև հայ վիպական ավանդության մեջ, մասնավորապես՝ «Սասնա ծռեր» հերոսական էպոսում [14, էջեր 83-87]: Երկու հեքիաթում էլ երկվորյակները ծնվում են անժառանգ վաճառականի ընտանիքում, երկու դեպքում էլ դեր է խաղում կենաց ծառը [22, էջ 396]: Առաջին հեքիաթում վաճառականը դերվիշի խորհրդով (քնած, թե արթուն) իր տան առջև գտնվող կաղնի ծառի վրա ապրող երկու թռչնի ձագ է մորթում, ուտում և երկվորյակներ ունենում: Երկրորդ հեքիաթում էլ է անժառանգ վաճառականի երկվորյակ տղաներ ունենալն անուղղակիորեն կապված

ծառի և թռչունի հետ: Խնձորենու վրայի թռչնի ձագին մայր թռչունին վերադարձնելուց հետո վաճառականը խնձորենու վրա մի խնձոր է տեսնում, կիսում է այն և կնոջ հետ ուտում: Պատահական չէ, որ երկու հեքիաթում էլ երկվորյակներից մեկի անունը՝ Ղուշ-բալասի (Ղուշ-Բալասի), նշանակում է թռչնի ձագ և ընդգծում է նրանց թռչնային ծագումը: Երկու հեքիաթում էլ երկվորյակները հակադիր կերպարներ չեն, ինչպես երկվորյակների առասպելի բազմաթիվ մոտիվներում: Եթե հակադիր երկվորյակները հեռանում են տնից՝ հակադրվելով ծնողներին կամ միմյանց, ապա այս երկու հեքիաթում էլ թագավորը, իր իշխանությունը վտանգված տեսնելով, երկվորյակներին և նրանց ծնողներին աքսորում է երկրից: Երկվորյակներին տանում են կախարդված բացատ, որ այլևս նրանք չկարողանան վերադառնալ և վտանգել թագավորի իշխանությունը: Երկու հեքիաթում էլ երկվորյակներից մեկը չի դիմանում կախարդանքին և մահանում է: Քնի մեջ (Ժամանակավոր մահ) ինչ-որ ծերունու (հեքիաթներից մեկում՝ Սուրբ Սարգսի) միջամտությամբ ու խորհուրդներով նա վերակենդանանում է, և փոխադարձ որոնումներից հետո միմյանց, ինչպես նաև արտաքսված ծնողներին գտնում են, երկուսն էլ դառնում են թագավոր (մեկը այն երկրի, որտեղից արտաքսվել էին):

Միայն երկվորյակների ծնունդի մոտիվով են (մոտիվներ T511, T512) այս հեքիաթները համապատասխանում միջազգային դասակարգմամբ ATU 303 տիպի «Երկվորյակներ կամ արյունակից եղբայրներ» հեքիաթախմբին [25, էջ 183]:

Արժե հիշատակել նաև Շիրակի տարածաշրջանի այն հեքիաթների մասին, որոնցում առկա է կոնտամինացիան, այսինքն՝ հեքիաթ հեքիաթի մեջ:

Բանագիտության մեջ սյուժեների միացումն ընդունված է անվանել կոնտամինացիա: Կոնտամինացիոն հեքիաթում առանձնանում են հիմնական և կախյալ սյուժեն, որը նպաստում է գործողությունների միասնականությանը: Կախյալ սյուժեն իր առավել բնորոշ, դրամատիկ մասով միանում է հիմնական սյուժեին:

Պարույր Բարսեղյանի գրառած «Ձան հրեջ թագավորը» հեքիաթում [1, էջ FFIV: 2257,01-2275,00] ընդգրկված են լվացք անող կնոջ, կույրի և վաճառականի հետ պատահած փորձանքների մասին պատումները: Թագավորը համոզվելու համար, թե որքանով է իր որդին ընդունակ ղեկավարելու երկիրը, նրա առաջ պայման է դնում՝ գնա այնինչ երկիրը և իմանա լվացք անող կնոջ դարդ ու ցավի մասին և գա պատմի իրեն: Սակայն արքայազնը թագավորի պայմանը կատարելու համար ստիպված է լինում նաև կույրին, այնուհետև վաճառականին համակած դարդ ու ցավի մասին տեղեկություն ստանալ: Եվ այդ տեղեկություններից յուրաքանչյուրը մի ամբողջական հեքիաթ է, որը կազմում է հիմնական հեքիաթի բաղկացուցիչ մասը:

Ի տարբերություն վերջին հեքիաթի, որում կոնտամինացիոն հեքիաթները չեն ուղեկցվում հերոսի գործողություններով՝ բանահավաք Հրաչ Մկրտչյանի՝ 1974 թվականին Ախուրյանի շրջանի Ջրառատ գյուղում բանասաց Սուրեն Սարգսյանից գրառած հեքիաթում («Թագավորի տղի հեքիաթը») [15, էջ FFXI: 7631,01-7671,00] հերոսի բազմաթիվ փորձությունների ընթացքում է առկա կոնտամինացիան: Հեքիաթի մի շարք դրվագներից հետո թագավորի փոքր տղայի առաջ շահմար օձը պայման է դնում այնինչ թագավորի աղջկան բերել իր համար: Թագավորի աղջկան ձեռք բերելու համար երախ-



տապարտ մկան օգնությամբ, երեք ավարտուն հեքիաթ ներկայացնելով՝ հերոսը կարողանում է խոսեցնել արքայադստերը՝ դրանով իսկ կարողանալով կատարել Շահնար օձի պայմանը:

Շիրակի տարածաշրջանի հրաշապատում հեքիաթների կառուցվածքային առանձնահատկություններից է սկսվածքային, միջնամասային և եզրափակիչ կայուն բանաձևերի կիրառումը: Հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում ավանդական կայուն բանաձևերին հանգամանորեն անդրադարձել է բանագետ Էսթեր Խեմսյանը «Տավուշի բանահյուսական ժառանգությունը» ուսումնասիրության մեջ [6, էջեր 107-145]:

Շիրակի հրաշապատում հեքիաթներում սկզբնամասային կամ սկսվածքային կայուն բանաձևերը երեք տիպի են: Առաջին տիպի բանաձևերը կազմված են երկու բաղադրիչից՝ «կէղնի», որով հաստատվում է հետագա իրողությունը և անմիջապես ժխտվում է՝ «չի էղնի»: Օրինակ՝ «Կէղնի, չի էղնի, Թերյան քաղաքի մեջ կէղնի մեկ վաճառական» [5, էջ FFX: 2997,01-3083,00], որով ընդգծվում է ժամանակի անորոշությունը, և կասկածի տակ է դրվում պատումի իրական լինելը: Երկրորդ տիպի սկսվածքներում, ժամանակի անորոշությունից զատ, ստեղծվում է անհիշելի ժամանակի պատրանք «Ժամանակոց քաղքիմ մեջ կար մե թագավորը» [1, էջ FFIV: 2257,01-2275,00]: Երրորդ տիպի սկսվածքներով չի ժխտվում հեքիաթային ժամանակը, այլ ներկայացվում է որպես որոշակի ժամանակաշրջանում կատարված իրողություն. «Լինում է մի քյասիբ ընտանիք» [13, էջ FFX: 6649,01-6681,00]:

Սովորաբար Շիրակի տարածաշրջանի հրաշապատում հեքիաթներն ավարտվում են պատումից բխող եզրակացությամբ կամ մաղթանքներով, որոնք ուղղված են հեքիաթի հերոսներին և ունկնդիրներին. «Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին» [13, էջ FFX: 6649,01-6681,00]: Կամ «Երկնքից ընկավ երեք խնձոր, մեկը հեքաթ ասողին, մեկը գրողին, մեկն էլ լսողին» [1, էջ FFIV: 2291,01-2309,00]:

Ինչպես հայ ժողովրդական բոլոր հրաշապատում հեքիաթներում, այնպես էլ Շիրակի հեքիաթներում, սկսվածքային և եզրափակիչ արտաքին կայուն բանաձևերից բացի, կան նաև միջնամասային ներքին կաղապարներ, որոնք օրգանապես կապված են հեքիաթի սյուժեի հետ և կարող են օգտագործվել մի քանի անգամ՝ կապված հերոսի գործողությունների հետ, հերոսի տարիքի անհավանական աճի հետ, միջանկյալ տեղեկատվության նպատակով և այլն: Օրինակ. «Շատ գնացին, թե քիչ, աստված գիտե» [1, էջ FFIV: 2257,01-2275,00], «Ուրիշները տարով կը մենձընան, հեքթի տղեն օրով կը մենձընա» [16, էջ FFX: 1117,01-1147,00], «Մենք խաբար տանք էդ փոքր շնիկեն ու կատվեն» [13, էջ FFX: 6649,01-6681,00]:

Շիրակի վիպական բանահյուսության մաս կազմող՝ ուսումնասիրության համար ընտրված հրաշապատում հեքիաթներն ունեն տարածաշրջանին բնորոշ առանձնահատկություններ, զուգահեռներ ինչպես Հայաստանի մյուս տարածաշրջանների, այնպես էլ այլ ժողովուրդների հեքիաթների հետ, աչքի են ընկնում կառուցվածքային և սյուժետային յուրօրինակությամբ, պատումի ամբողջականությամբ, հարուստ բառամթերքով և ասույթաբանության կիրառմամբ:

**Իրապատում հեքիաթներ**

Շիրակի իրապատում հեքիաթների հերոսները ներկայացնում են տարածաշրջանի ազգաբնակչության բոլոր շերտերը (գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, հոգևորականներ և այլն): Հերոսների կերպարներում խտացված են տարածաշրջանի բնակչության ամենաբնորոշ հատկանիշներն ու բնավորության գծերը (խտհեմությունը, խորամանկությունը, սրամտությունը, բարեհոգությունը և այլն):

Իրապատում հեքիաթների շարքում առանձնացվել են հրաշապատումի տարրերով, կենցաղային, պատմական դեմքերի մասին հեքիաթները, իրական անձանց (գյուրեցիների) մասին զրույցները, զրույցներ ամուսնական զույգերի մասին և այլն: Այս հեքիաթները գրառվել են տարբեր բանահավաքների կողմից, բայց այդ գրառումների մեծամասնությունը կատարել են Սարգիս Հարությունյանը, Պարույր Բարսեղյանը, Անուշավան Գևորգյանը և Հրաչ Մկրտչյանը:

**Կենդանական հեքիաթներ**

Շիրակի տարածաշրջանում համեմատաբար քիչ են կենդանական հեքիաթները, դրանք երբեմն աղերսներ ունեն հայկական միջնադարյան առակների հետ և ավարտվում են բարոյախրատական եզրահանգումով:

Երվանդ Լալայանի՝ ալեքսանդրապոլցի Մնացական Չոլադյանից 1915 թվականին գրառած «Էջն ու դավեն» կենդանական հեքիաթը (համապատասխանում է ATU 214A «Երգող էջ, պարող ուղտ» տիպի հեքիաթին [25, էջ 134], ըստ որի՝ ուղտին և էջին բռնում են էջի երգելու պատճառով և աշխատեցնում են քարավանում: Էջը հրաժարվում է գետը մտնել, ուղտը ստիպված է լինում էջին դնել իր վրա, որ գետն անցկացնի: Ճանապարհի կեսին ուղտը պարում է և էջին գետն է գցում: Լալայանի տարբերակում քարավանի մեջ աշխատող էջն ու ուղտը խորհուրդ են անում և որոշում փախչել: Ազատ կյանք են վարում, մի օր էլ էջը որոշում է գռռալ, որի արդյունքում նրանց բռնում են և մի ուրիշ քարավանում են աշխատեցնում: Գետը անցնելիս ստիպված են լինում էջին դնել ուղտի վրա:

«Դավեն քնաց ջրի օրթալըղը ու ըսավ էջին.- Էջ ախպեր, ինչ որ քու կանչդ էկել էր, իմս էլ հիմա պար խաղալս է էկեր, պար պիտի խաղամ:

Էջը կըսե.- Դավա ախպեր, մի խաղա, վար կընկնեմ, կը խեխտվեմ, աստծու խաթր: Դավեն սկսեց պար խաղալ և իշուն գցեց ջուրը, խեխտեց ու ըսավ էջին.- Գնա՛, ըսավ.- դու իմ գլխին շատ դագա կը բերես,- ըսավ» [4, էջ FAV: 7750,01-7754,00:

Երվանդ Լալայանն այս հեքիաթը գրառել է Թիֆլիսում, այդ պատճառով էլ Շիրակի բարբառը մասամբ է պահպանված:

**Զվարճախոսություններ**

Շիրակի տարածաշրջանի վիպական բանահյուսությունն ամբողջացնում է զվարճախոսության ժանրը՝ իր ինքնատիպ դրսևորումներով և ավանդական համահայկական հնչեղություն ունեցող հերոսներով (Պոլոզ Մուկուչ, Ծիտրո Ալեք, Ջղեր Խաչիկ, Կուժիկ, Վարդանիկ և ուրիշներ):

Զվարճախոսությունների համահայկական հերոսի՝ Պոլոզ Մուկուչի (Մկրտիչ Ղազարի Մելքոնյան) մասին ամենահարուստ հավաքածուն Պարույր Բարսեղյանինն է:

Ներկայացնենք նրա բազմաթիվ զվարճախոսություններից մեկը, որում հանդես է գալիս նաև Ծիտրոն:

«Պոլոզ Մուկուչը ու իրա ընկեր Ծիտրոն, որը Մուկուչից տարիքով մեծ էր, իրար հետ խոսում են: Պոլոզ Մուկուչը հարցնում է.- Էդ ի՞նչն է կեղնի օր պարավորը ինքնիրան կերթա:

- Ընչի չիտե՞ս, բոլով կերթա,- պատասխանում է Ծիտրոն:

- Ի՞նչ կը խոսի,- զարմանում է Պոլոզ Մուկուչը,- բոլով օր էրթլու էղնիր, Ձիթողոցն քաղնիքը վաղուց Լոնդոն հասած կեղնիք» [2, էջ FFIV: 2509,02]:

Բանահավաք Անուշավան Գևորգյանը, ներկայացնելով իր գրառած զվարճախոսությունների հերոսներին, գրել է. «Այս երկու լենինականցիները՝ Ջղերը և Կուժիկը, անչափ սրամիտ ու սրախոս մարդիկ են» [3, էջ FFIII: 5089,01]: Հատկանշական է, թե գյումրեցիներն ինչպես են իրենք իրենց գնահատում.

«- Ջղեր, էտ ի՞նչ բան է ռոբոտը:

- Էրկթից շինած «մարդ», որը ինչքան խմե, չի հարփի ու ամեն դարդի ու ցավի էլ կդիմանա...

- Հայ է՞...

- Չէ, գյումրեցի է» [3, էջ FFIII: 5092,02]:

Մեկ այլ զվարճախոսության մեջ.

«- Կուժիկ ջան, կը հավատա՞ս, ես հեջ մեռնելուց չեմ վախնա...

- Հըբը ինչի՞ց կը վախնա:

- Կը վախնամ մեռնիմ՝ գյոզալըմ Գյումրին ֆաստնից ընկնի...» [3, էջ FFIII: 5102,02]:

Շիրակյան մեծաթիվ զվարճախոսություններ են գրառել նաև Մարգիս Հարությունյանը, Եղիշե Խաչատրյանը, Հրաչ Մկրտչյանը, Աշոտ Գևորգյանը և ուրիշներ:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ.** Շիրակի վիպական բանահյուսությունը Հայաստանի մյուս տարածաշրջանների բանահյուսական ժառանգության համատեքստում, փոխներգործությունների և փոխառնչությունների արդյունքում ունենալով որոշ ընդհանրություններ, այցի է ընկնում տարածաշրջանին հատուկ կոլորիտով ու բարբառով: Հատկապես ուշադրության են արժանացվել հրաշապատում հեքիաթները:

Ընտրված հեքիաթների կառուցվածքային, սյուժետային զուգահեռների վերլուծությունը և համեմատությունը համահայկական և միջազգային հեքիաթների հետ զուգահեռների վերլուծությունը ցույց է տալիս, որ Շիրակի տարածաշրջանի վիպական բանահյուսության սովոր մասը կազմող հրաշապատում հեքիաթները 1) ունեն վաղնջական արմատներ, 2) աղերսներ ունեն հայկական և միջազգային առասպելների հետ, 3) միջազգային սյուժեների փոխներթափանցումների արդյունքում տեղական սյուժեները ձեռք են բերել մոտիվային համալրումներ՝ պահպանելով տարածաշրջանին բնորոշ օրիգինալ մոտիվներ, որոնց զգալի մասը առկա չէ ինչպես համահայկական, այնպես էլ այլ ժողովուրդների նույնատիպ հեքիաթներում, 4) առանձնանում են սկսվածքային, միջնամասային և եզրափակիչ կայուն բանաձևերի տեղական տարբերակներով, ասույթաբանության կիրառմամբ, սյուժեի ամբողջականությամբ և տարածաշրջանին բնորոշ բառամթերքով, 5) հանդիպում են կենցաղային ժամանակակից տարրերի դրսևորումներ:

Հնդվածի մեծածավալ լինելու հանգամանքով պայմանավորված՝ Շիրակի վիպական բանահյուսության մյուս ժանրերին անդրադարձել ենք հպանցիկ:

Գրականություն

1. Բարսեղյան Պ. *Հեքիաթներ և մասպենդեր, ձեռագիր հավաքածու*, 1966: ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանահյուսական արխիվ (ՀԱԻԲԱ), FFIV: 2257,01-2275,00, FFIV: 2291,01-2309,00, 1961:
2. Բարսեղյան Պ. «Պողոզ Մուկուչ», *ձեռագիր հավաքածու*, ՀԱԻԲԱ FFIV: 2509-2513, 1966:
3. Գևորգյան Ա. *Ձեռագիր հավաքածու*, ՀԱԻԲԱ FFIII: 5089-5102:
4. Լալայան Ե. *Ձեռագիր հավաքածու*, ՀԱԻԲԱ FAV: 7750,01-7754,00: Թիֆլիս: 1915:
5. Խաչատրյան Ս. *Արթիկի շրջանի ժողովրդական բանահյուսություն (հեքիաթներ, առակներ), ձեռագիր հավաքածու*, ՀԱԻԲԱ FFX: 2997,01-3083,00: 1973:
6. Խենյան Է. *Տավուշի բանահյուսական ժառանգությունը*, Երևան, ՀԱԻ հրատ., 2020, 232 էջ:
7. Խենյան Ս. *Շիրակի մի հրաշապատում հեքիաթի տեղը «Կախարդական մատանի» տիպի հեքիաթախմբում*, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, № 2(25), 2022, 40-50 էջեր:
8. *Հազար ու մեկ գիշեր, ընտիր հեքիաթներ*, «Հայաստան», Երևան, 1990, 608 էջ:
9. *Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. I, Արարատ* (կազմող՝ Ա. Մ. Նազինյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 671 էջ:
10. *Հայ ժողովրդական հեքիաթներ, Բագրևանդ (Արաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ), հ. IX*, կազմող՝ Սկրտչյան Ս.: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 651 էջ:
11. Հարությունյան Ս. *Հայ առասպելաբանություն*, Բեյրութ, «Համագրային» տպարան, 2000, 527 էջ:
12. Հարությունյան Ս. *Բանագիտական ակնարկներ*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան, 2010, 262 էջ:
13. Ղազարյան Բ. «Չամփոխաթի հեքիաթը», *ձեռագիր հավաքածու*, ՀԱԻԲԱ FFX:6649,01-6681,00, 1973:
14. Ղուեչյան Լ. *Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ախանդության համակարգում*, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: Երևան: 2012: 152 էջ:
15. Սկրտչյան Հր. «Թագավորի տրդի հեքիաթը», *ձեռագիր հավաքածու*, ՀԱԻԲԱ FFXI: 7631, 01-7671,00: 1974:
16. Սովսիպյան Հ. *Նյութեր հայ ժողովրդական բանահյուսությունից (Ախուրյանի շրջան), ձեռագիր հավաքածու*, ՀԱԻԲԱ FFX:1117,01-1147,00: 1958:
17. Гринцер Р. *Гаруда // Мифы народов мира*, т. I, «Советская энциклопедия», Москва, 1987, 266 с..
18. *Грузинские народные сказки*. Сост., вступит, статья, примеч. и типолог. анализ сюжетов Т. Д. Курдованидзе. Кн. 2. М., Главная редакция восточной литературы изд. «Наука», 1988. 333 с.
19. *Деревянный орелъ*, Под редакцией: Худ. Е. Нарбут, Издание И. Кнебель, М.1909, 12 с.
20. Пропп В. Я. *Морфология сказки*, Москва, “Наука”, 1969, 168 с.
21. *Сказка о славномъ и именитомъ царевичѣ Маландрахѣ Ибрагимовичѣ и о прекрасной царевнѣ / Дѣдушкины прогулки, десять русскихъ сказокъ, цензоръ Яковъ Толмачевъ, № 5*, Москва, Типография Решетникова, 1819, сс. 2-26.
22. Топоров В. Н. *Древо жизни // Мифы народов мира*, т. I, М., “Советская энциклопедия”, сс. 396-398.
23. Фрэззер Дж. *Золотая ветвь. Исследование магии и религии*, Москва, Изд-во политической литературы, 1986, 703 с.
24. *The Panchatantra of Vishnu Sharma*, English Translation, Arthur W. Ryder, Composed and Printed By The University of Chicago Press, Chicago, 1925.
25. Uther, Hans-Jörg., *The types of international folktales: A Classification and Bibliography Based on the System of Antti Aarne and Stith Thompson, part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales. and Realistic Tales, with an Introduction*, Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011.

References

1. Barseghyan, P. Tales and fables, manuscript collection, [*Hek'yat'ner ev masalner, dzeragir havak'atsu*], Yerevan, 1961 Folklore Archive of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia (FAIAE NAS RA), FAIAE FFIV: 2257,01-2275,00, FFIV: 2291,01-2309,00 (in Armenian)
2. Barseghyan, P. “Poloz Mukuch” manuscript collection, [*Poloz Mukuch, dzeragir havak'atsu*], Yerevan, 1966, FAIAE FFIV: 2509-2513 (in Armenian)
3. Gevorgyan A. Manuscript collection, [*Dzeragir havak'atsu*], FAIAE FFIII: 5089-5102 (in Armenian)
4. Lalayan E. Manuscript collection, [*Dzeragir havak'atsu*], FAIAE FAV: 7750,01-7754,00, Tiflis, 1915, (in Armenian)
5. Khachatryan S. The folklore of region Artik, manuscript collection [Art'iki shrjani jhoghovrdakan banahyusutyun, dzeragir havak'atsu], 1973, FAIAE FFX: 2997,01-3083,00, (in Armenian)
6. Khemchyan E. The Folklore Heritage of Tavush [*Tavushi banahyuskan jarangutyuny*], Publishing House of the Institute of Archaeology and Ethnography, Yerevan, 2020, 232 p. (in Armenian)
7. Khemchyan M. The place of a Shirak Magic Folktale in the “Magic Ring” Folktale Type Group [*Shiraki mi hrashapatum heqiati texy “Kakhardakan matani” tipi hek'iat'akhmbum*], ScientificWorks in Shirak Centre of Armenological Studies NAS RA, Edition 25, Volume 2, 2022, p. 40-50 (in Armenian)
8. The Book of the Thousand Nights and One Night [*Hazar u mek gisher*], “Hayashtan” publ., 1990, 608 p. (in Armenian)
9. Armenian Folk Tales, Ayrarat, volume I [Hay jhoghovrdakan hek'iatner, hator I], Publishing house of the Academy of Sciences of SSRA, Yerevan, 1959, 671 p. (in Armenian)
10. Armenian Folk Tales, Bagrevand, volume IX [*Hay jhoghovrdakan hek'iatner, hator IX*], Publishing house of the Academy of Sciences of SSRA, Yerevan, 1968, 649 p. (in Armenian)
11. Harutyunyan S. Armenian mythology [*Hay ar'aspelabanut'yun*], Beirut, National printing house, 2000, 527 p. (in Armenian)
12. Harutyunyan S. Essays on Folklore Studies [*Banagitakan aknarkner*], Publishing House “Gitutyun” NAS RA, 2010, 262 p. (in Armenian)
13. Ghazyan B. “The Tale of Ĵamp'ulad”, manuscript collection [“Ĵamp'uladi hek'iat'y”, dzeragir havak'atsu], 1973, Leninakan, FAIAE FFX:6649,01-6681,00, (in Armenian)
14. Ghrejyan L The Mith of twins and its Various Manifestations in the System of the Armenian Epic Tradition [*Erkvoriakneri araspely ev dra tarber drsevorumnery haj vipakan avandwuthian hamakargum*], “Gitutyun” Publishing House of the NAS RA, Yerevan, 2012 (in Armenian)
15. Mkrtychyan Hr. “The Tale of Prince”, manuscript collection [“T'agavori tyghi hek'iat'y”, dzeragir havak'atsu], 1974, FAIAE FFXI: 7631,01-7671,00 (in Armenian)
16. Movsisyan H. The materials from Armenian folklore (Region Akhuryan), manuscript collection [*Nyut'er haj jhoghovrdakan banahyusutyunic (Akhuryani shrjan), dzeragir havak'atsu*], 1958, FAIAE FFX:1117,01-1147,00 (in Armenian)
17. Grintser, P. Garuda, Myths of the Peoples of the World, Volume 1 [*Garuda, Mify narodov mira, Encyclopedia tom 1*], “Sovetskaja Encyclopedia”, Moscow, 1987, p. 266 (in Russian)
18. Georgian Folk Tales, Compiler, introduction and Tipological analyses by T. D. Kurdovanidze, Volume 2 [*Gruzinskie narodnye skazki (GNS), Sostavlenie, vstupitel'naia stat'ya i tipologicheskij analiz T. D. Kurdovanidze, v dvukh tomakh, tom 2*], “Nauka”, Moscow, 1988, 333 p., (in Russian)
19. Wooden eagle: editor Narbut E. I. [*Dereviannyj oriol, pod redaktsiej khudojnika Narbut E. I.*], Edition Knebel', Moscow, 1909, 12 p. (in Russian)
20. Propp, V. Morphology of the Folktale [*Morfologia skazki*], Moscow, “Nauka”, 1969, 168 p. (in Russian)

21. A fsiry tale about the Glorious and eminent Prince Malandrakh Ibrahimovich and the beautiful Princess [Skazka o slavnom I imenitom tsareviche Malandrakhe Ibragimoviche I o prekrasnoj tsarevne] Moscow, 1819, p. 2-26 (in Russian)
22. Toporov V. Tree of Life' Myths of the Peoples of the World, Volume 1 [Drevo jhizni, Mify narodov mira, Encyclopedia tom I], "Sovetskaia Encyclopedia", Moscow, 1987, p. 396-398 (in Russian)
23. Frazer J. The Golden Bough, A Study in Magic and Religion [Zolotaya vetv', Issledovanie magi I religii], Moscow, 1986, 703 p. (in Russian)

Շնորհովել է /Принята/ Received on: 23.07.2023

Գրախոսովել է /Рецензирована/ Reviewed on: 03.08.2023

Հանձնվել է տպ. /Сдана в пч. / Accepted for Pub: 27.11.2023

### **Տեղեկություններ հեղինակի մասին**

**Մարինե Հայկի ԽԵՄՉՅԱՆ՝** բան. գիտ. թեկնածու, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևան, ՀՀ  
Էլ. հասցե՝ mkhemchyan@yandex.ru, <https://orcid.org/0000-0003-4764-0876>

**Marine Hayk KHEMCHYAN:** PhD in Philology, Senior Researcher at Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA, e-mail: mkhemchyan@yandex.ru, <https://orcid.org/0000-0003-4764-0876>

**Марине Гайковна ХЕМЧЯН:** кандидат филолог. наук, старший научный сотрудник Института археологии и этнографии НАН, Ереван, РА  
эл. адрес: mkhemchyan@yandex.ru, <https://orcid.org/0000-0003-4764-0876>